

Հովհաննես Թովմանյանի Գերբ ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԳՈՂԱՐ ՄԻՄՈՆՅԱՆ

Մեծ են Հովհ. Թովմանյանի ծառայությունները հայ մանկական գրականության զարգացման գործում: Թերևս ոչ մի գրող այնքան ավանդ չի ներդրել այդ բնագավառում, որքան նա: Հայ մանկական գրականության զարգացման պատմության մեջ Թովմանյանի ստեղծագործությունը նշանավորեց նոր, առավել բարձր աստիճան: Նրա ուղին դեպի մանուկների աշխարհը օրինալափ էր ու բնական՝ պայմանավորված դրականության զարգացման նախորդ շրջանով:

Արդ. ի՞նչ է ժառանգել Թովմանյանն անցյալից, ի՞նչ է յուրացրել ստեղծագործաբար, ի՞նչ արժեքներ է ստեղծել և ի՞նչ ազդեցություն է ունեցել հետագա մանկագիրների վրա:

Թովմանյանը խորապես ծանոթ էր հայ հին ու միջնադարյան գրականությանն ու պատմագիտությանը, մանկավարժության պատմությանը, թարգմանական մանկական գրականությանն ու ժամանակի մանկական պարբերական մամուլին: Նրա մի շարք ստեղծագործություններ միջնադարյան գործերի ստեղծագործական վերամշակման արգասիք են: Հիշենք, օրինակ, «Մի կաթիլ մեղրը», որի նյութը վերցրել է Վ. Ալեքեկցուց կամ «Մանուկն ու ջուրը» և «Աղվեսը», որոնք «Տաղ ջրի վրայ է ասացել» և «Տաղ ուրախութեան ի վերայ աղուեսին» միջնադարյան ժողովրդական երգերի մշակումներն են: Ուշ միջնադարի հայտնի տաղերգու Դավիթ Սալաձորցու «Գովասանք ծաղկանց» բանաստեղծության խոր ներշնչմամբ է գրել Թովմանյանն իր «Մաղիկների երգը»: Նա մշտապես օգտագործել է ժողովրդական բանահյուսության անսպառ հարստությունը, շատ բան ընդօրինակել ժողովրդի գրական վարպետությունից: Ժողովրդական բանահյուսությունը և միջնադարյան հայ գրականությունը Թովմանյանի մանկական ստեղծագործությունների հիմնական աղբյուրներն են: Այդ են վկայում նրա «Սասունցի Դավիթը» պոեմը, մի շարք հեքիաթներ, «Արագիլ», «Խնոցի», «Ճնճղուկներ», «Փիսոն», «Առավոտ» և այլ ոտանավորներ:

Թովմանյանը ստեղծագործական ազդակներ է ստացել ևս. Աբովյանից, որին իրավամբ պիտք է համարել նաև հայ նոր մանկական գրականության հիմնադիրը: Նրա բացած այդ շավիղն էր, որը հետագայում վերածվեց մայրուղու: Մինչ այդ երեխաներին առաջարկվող դասագրքերը, այբենարանները, որոնք հրատարակված էին գերազանցապես Հայաստանի սահմաններից դուրս, ունեին կրոնաբարոյախոսական բնույթ, գրված էին գրաբարով, անտեսված էին երեխաների տարիքային առանձնահատկությունները, ևս. Աբովյանն առաջինն էր, որ խիզախեց երեխաներին տրվող խրթին գրքերը փոխարինել աշխարհիկ բովանդակությամբ և պարզ լեզվով գրված դասագրքերով: Նա հաշվի առավ երեխաների տարիքային առանձնահատկությունները, նրանց հետաքրքրությունները: Հայ մանկական գրականության զարգացման այս միտումը դարձավ հետագա շրջանի մանկագիրների, այդ թվում նաև Թովմանյանի ստեղծագործական նախասիրության ելակետը: Աբովյանի կիրառած կարեորագույն սկզբունքները հանդիսացան ռեալիզմն ու ժողովրդայնությունը, ևս. Աբովյանի մանկական ստեղծագործությունները, արտացոլելով ժողովրդական ըմբռնումները կյանքի ու մարդկային հարաբերությունների մասին, երեխաների մեջ սերմանում են աշխատասիրություն ու հայրենասիրություն, ճշմարտասիրություն ու մարդասիրություն, արժանա-

պատմության դժգոհում և համեստություն: Դրանցում քննադատվում է տգիտությունը, ծուլությունն ու ազահությունը, սերմանվում է ատելության զգացում՝ ամեն տեսակ բռնակալության ու ճնշման դեմ: Մեծ լուսավորչի պաշտպանած սկզբունքները պատմականորեն կարևորագույն դեր խաղացին մանկական գրականության ձևավորման ու զարգացման գործում: Աբովյանի հետևորդներից այդ սկզբունքները տեսականորեն ամենից ավելի խոր հիմնավորեց և դործնականորեն հանճարեղ ձևով զարգացրեց Թումանյանը: Ժողովրդական բանահյուսությունից բացի, Աբովյանը մեծ տեղ էր տալիս հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագներին, ժողովուրդների բարեկամության գաղափարին: Դրանք առանձին սիրով ու նոր ուժով դրսևորվեցին Թումանյանի մանկական ստեղծագործություններում: Նա մանկական գրականության մեջ մեծ կարևորություն էր տալիս ժամանակակից թեմատիկային:

Թումանյանը ժողովրդական ավանդապատումները անցկացնելով իր ստեղծագործական բովոյով, միշտ էլ հարազատ է մնացել ժողովրդի առողջ մտածողությանը և ուժին: Այդ են վկայում նրա լեզունները, պոեմները, հեքիաթներն ու զրույցները: Ուրեքան մեծ բան է,— գրում է Թումանյանը,— եթե գրողը կարողանա ճանապարհորդել, ուսումնասիրել իր ժողովրդին, ուսումնասիրել նրա ավանդությունները, լեզուն, ազաթները: Մաստիկ զգում եմ այս կարիքը ամեն անգամ, երբ լինում եմ ժողովրդի մեջ—ծով է ծով¹: Այդ կենսաբար ծովից է ըմպել բանաստեղծը և այդ ժողովրդայնության միջոցով է: որ շունչ ու հոգի են առել նրա մանկական երկերը և լայն ընդունելություն դտել ժողովրդի մեջ: Եվ դժվար է տարբերել, թե այդ գործերը փոքրահասակի՞ համար են գրված, թե՛ մեծահասակի:

Ղ. Աղայանի նման Թումանյանը ևս հեքիաթները մշակելիս հաշվի էր առնում մանուկների կոնկրետ մտածողությունը, նրանց հոգեբանությունը և երեխային դնելով ակտիվ վիճակում՝ նրան մղում ժողովրդական վեհ իդեալների հաղթանակի համար պայքարի:

Ժողովրդայնության հետ կարևոր է շեշտել Թումանյանի ռեալիստական հաստատուն սկզբունքները: Մանկագրից իրականության խոր և բազմակողմանի ճանաչում պահանջող Թումանյանը մանուկի դաստիարակիչ դերը համարում էր անհնարին՝ առանց կյանքի ճշմարտացի և տիպական արտացոլման: Թումանյանի մանկական ստեղծագործությունները կենդանի են, աշխույժ, որովհետև այն աղբյուրը, որտեղից նա վերցնում է իր լեզվի ճկուն արտահայտչաձևերը, ժողովրդի լեզուն է:

Անցյալի մանկական գրականության ավանդները Թումանյանը զարգացրել ու հարստացրել է, հասցրել բարձր կատարելության, տեսականորեն ընդհանրացրել նրա սկզբունքները և լուսավորել նրա հետագա ուղին:

Բազմաթիվ անհետաձգելի գործերի հետ Թումանյանը մի առանձին սիրով է զբաղվել փոքրիկների ուսման ու դաստիարակության, նրանց գեղարվեստական պահանջմունքները բավարարելու հարցերով: Մեծ գրողի գրական հարուստ ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում նրա բազմաբովանդակ մանկական ստեղծագործությունները: Իր կյանքի ողջ ճանապարհին նա շարունակ զբաղել է մանկական գրականության կենսական անհրաժեշտությունն ու պակասը և թերևս այդ պատճառով մանուկների ու պատանիների համար ստեղծագործելը համարել առաջնահերթ խնդիր: Տակավին պատանի էր, երբ ստեղծում է «Շունն ու Կատուն» (1886), «Անբախտ վաճառականներ» (1886), «Արև և Լուսին» (1887) և այլ գործեր: Սրանց հաջորդում է «Դիքորը» (1895) գողտրիկ պատմվածքը, որը հաստատորեն մտել է համաշխարհային գրականության ոսկե ֆոնդը: Ժամանակի հետ ուժեղանում էր Թումանյանի հետաքրքրությունը մանկական գրականության նկատմամբ, նա մասնակցում է «Աղբյուր», «Հասկեր» մանկական ամսագրերի և «Լուսաբեր» դասագրքի հրատարակման աշխատանքներին:

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1945, էջ 187:

1908 թ. նոյեմբերին Մարիամ Թումանյանի նյութական աջակցությամբ, Ռոտտերի և Երիցյանի գունավոր նկարազարդումներով հրատարակվում են Հովհ. Թումանյանի մանկական գրվածքները՝ «Հովհաննես Թումանյանի մանկական գրադարանը» սերիայով, մոտ 15 գիրք («Քաջ Նազարը», «Տերն ու ծառան», «Անբախտ վաճառականներ» և այլն)։

Թումանյանն ինքը կյանքում երեխաների դաստիարակության փայլուն օրինակ էր ցույց տալիս. լինելով բազմազավակ հայր (ունեի 10 երեխա), սիրով ու ամուր թելերով երեխաների հետ կապված Թումանյանն անչափ մտահոգված էր նրանց կրթության ու դաստիարակության հարցերով. Երեխաներին ուղարկելով Դսեղ՝ հանձնարարում էր, որ պահեն օրագիր, գրի առնեն ծերունիներից լսած հեքիաթները, պատմությունները, ժողովրդական երգերը, նկարագրեն բնությունը, մարդկանց նիստուկացը, բարքերը, կենն իր հիշողություններում գրում է. «Եվ այդ բանակը (խոսքը Թումանյանի երեխաների մասին է—Գ. Ս.), մեծերից սկսած մինչև բոլորովին փոքրերը, շենքով ու շնորհքով կառավարված, հագնված ու դաստիարակված, ներկայանում էր գրական ճաշերին ու հավաքություններին իբրև գրական մթնոլորտով տոգորված, բարեկիրթ, հյուրասեր և ուրախ մի ընտանիք»²։

Մանուկների, պատանիների, ապագա քաղաքացիների ճակատագրով մտահոգված, նրանց հետ ամենանուրբ թելերով կապված բանաստեղծը հայ ժողովրդի օրհասական օրերին, 1915 թվին, թողնելով իր տունն ու գրական խաղաղ աշխատանքը, մեկնում է էջմիածնի «Գեօխը»՝ օգնելու զաղթականությանը և առանձնապես որբերին։ Թումանյանի՝ մատաղ սերնդի նկատմամբ տածած մեծ սիրո արտահայտություն է նաև 1919 թ. իր ծննդյան 50-ամյակի առթիվ աշակերտությանն ուղղած պատասխան խոսքը. «Ծն էլ ձեզ նման երեխա եմ ու հարազատ են ինձ բոլոր երեխաները, ձեր աշխարհը, որը և իմ աշխարհն է, սիրում եմ ձեզ և ձեր աշխարհը»։ Շարունակելով իր խոսքը, Թումանյանը շեշտում է. «...կյանքիս ամենապայծառ ու ամենալավ օրերն ու վայրկյանները դուք եք ինձ տվել, սիրելի մանուկներ, ձեզ հետ եմ եղել, ձեզնով եմ ապրել»³։ Ուստի, միանգամայն բնական և օրինաչափ են մանուկների բարեկամի՝ առողջ սերունդ դաստիարակելու ջանքերը, որոնք գործադրել է նա թե՛ դպրոցական դասագրքեր կազմելով, թե՛ մանկական պարբերականներին ունեցած մասնակցությամբ, թե՛ մանուկների համար ստեղծած սքանչելի երկերով։

Հ. Թումանյանը հաշվի էր նստում ոչ միայն մանուկների հետաքրքրությունների հետ, այլև ամսագրում հրատարակվող նյութը հաճախ դնում էր նրանց դատի առաջ և ապա նոր հրատարակում։ Մանկական որևէ գրվածք գրելուց հետո,— վերհիշում է Ն. Թումանյանը,— ամեն անգամ մեզ հավաքում էր իր սենյակը, կարդում, ամեն մեկից կարծիք հարցնում, ընդհանուր տպավորությունն իմանում, հետո ուղարկում «Հասկերին»։ Տպելիս ինքն էր անում վերջին սրբագրությունը, որ սխալ չլրիպի, իսկ եթե անհնաժեշտ գրքով էր հրատարակվում, մինչև գրքի լույս տեսնելը տպարանից չէր հեռանում։ Ամեն ինչ իր ճաշակով ու իր ձեռքով էր անում։ Նախ լավ թուղթ էր ընտրում. նկարչին պատվիրում էր ու հետևում նրա արածին»⁴։

Թումանյանը շատ լավ էր դիտակցում, որ մանկական գրականության առանձնահատկություններն ամեն գրող չէ, որ կարող է հաշվի առնել և հաղթահարել մանկական լիարժեք գրվածքներ ստեղծելու հետ կապված դժվարությունները։ Իր բառերով՝ ասած, «հեշտ ու հանաք բան» չէ մանկական գրվածք գրելը, Ուստի, նրբանկատ մանկագիրը, լինելով հոգեբան-արվեստագետ, գտնում էր, որ մանկական գրողը առաջին հերթին պետք է նկատի ունե-

2 «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 56։

3 Նվարդ Թումանյան, Հովհաննես Թումանյան, Երևան, 1939, էջ 94։

4 Նվարդ Թումանյան, Հուշեր ու զրույցներ, Երևան, 1969, էջ 81։

նա Երևյալի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, մշմարտացի բացահայտի մանուկների հոգեկան աշխարհը և անհրաժեշտության դեպքում տեղայնացնի նյութը, այն կապի իրականության, երեխայի շրջապատի, առօրյա կյանքի հետ: Մանկական գիրքը պետք է մատչելի լինի տվյալ հասակին, հաշվի առնի երեխաների բազմապիսի հետաքրքրությունները: Նա պահանջում էր հատուկ ուշադրություն դարձնել թեմաների ընտրությանը, դեղավետական մատուցման ձևերին, պատկերային, ոճական սիստեմին: Մասնավորապես դնում էր սեղմ գրելու, լեզվի մատչելիության պահանջը. «Լեզուն... մարդկանց մտքերի միջնորդն է. նա պետք է մատչելի լինի հասարակության և ընդունակ սնուցանելու ամեն մեկին...»⁵: Մանկական գրքի ձևավորումը, գեղեցիկ նկարազարդումը միշտ էլ եղել են մեծ բանաստեղծի ուշադրության կենտրոնում: Քանի որ նկարչական ձևավորումը նույնպես երեխայի ճաշակը զարգացնող միջոց է, ուստի նա անհրաժեշտ էր համարում, որ գիրքը հրատարակվի լավ թղթով, ցայտուն լինեն գույները, տառերը, շապիկը:

Թումանյանը գտնում էր, որ մանկությունը մարդու կյանքի այն ամենարդիունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ, հետևաբար պետք է շարունակել սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա: Այդ տեսակետից կարևոր են մանկագրի հետևյալ մտորումներն ու կենսական տպավորությունները. «Ինչ վերաբերում է սնունդին, ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհում, սնունդ է նրա համար: Միայն թե պետք է իմանալ, գտնել էս անսպառ սնունդ տալու ձևը: Եվ մինչդեռ մենք նստած խոր մտածում ենք էս դժար հանելուկի վրա, ինքը մանուկ հասակը՝ ցույց է տալիս էն հրաշալի ձևը ու ամեն տեսակի սնունդ էլ պահանջում է իր ուզած ձևով-խաղով»⁶:

Մեծ մանկագիրը գտավ «սնունդ տալու» իսկական եղանակը. դրա վկայություններն են մանուկների համար կերտած նրա անզուգական ստեղծագործությունները: Մանկան դաստիարակության միջոցներից մեկը գրողը համարում է խաղը. «Խաղը նրա, մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը, խաղում է նրա թրթռուն սիրտը ջահել կրծքի մեջ, ու կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում: Դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում, առանց ձանձրանալու, առանց հոգնելու»⁷: Դրա համար էլ 1915 թ. հրատարակում է խաղերի մի շարք ու երեխաներին խաղի միջոցով ծանոթացնում շրջապատի երևույթների, իր երկրի բնության հետ: Նա երեխաներին զանազան խաղերով ու բացատրական գրքուկներով, քարտեզներով, նկարներով ծանոթություն է տալիս Հայաստանի, Կովկասի ջրերի, լեռների, լճերի, քաղաքների պատմության, գրականության, կենդանական ու բուսական աշխարհի, բնական հարստությունների մասին, որպեսզի նրանք մոտիկից ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը: Ուսումնասիրելով Հայաստանի աշխարհագրությունը՝ Թումանյանը ոգևորված կազմում է «Հայոց գետերը» և «Հայոց լեռները» խաղերը: Հենց իր՝ Թումանյանի տանը 1914 թ. կազմակերպվում է «Մանուկ» ընկերությունը՝ Թումանյանի նախաձեռնությամբ ու նրա որդի Արտավազդի ղեկավարությամբ: Նա գտնում էր, որ այդ խաղերը կօգնեն, որպեսզի «...մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը: Միրեն ոչ թե կույր աղգասերի սիրով, այլ գիտակից, ինտելիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի, առողջ ու բովանդակալի»⁸: Այդ ընկերությունը բավական գործ է

⁵ Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 97:

⁶ Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 328:

⁷ Նույն տեղում, էջ 328:

⁸ Նույն տեղում, էջ 329:

կատարում. կազմում է մի շարք խաղեր՝ թանկագին քարերի, աստղերի, գույների, հայոց գետերի, տառերի մասին:

Գրկաբաց ընգունելով Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, Թումանյանը 1922 թ. Հայաստանի լուսժողովում Պ. Մակինցյանին գրած նամակում արտահայտում է այն խորը մտահոգությունը, որ պաշարել է իրեն: Նա ուսումնասիրել է հայ մանկական գրականության վիճակը սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, խորհուրդ է տվել մոտ կանգնել մանկական գրականությանը, լրջորեն զբաղվել նրա զարգացման հարցերով: Թումանյանը գրում է. «Ասում ես՝ մանկական գրականության սով է ձիշտ ես ասում: Բայց միայն էսօր չի էդ սովը: էդ սովը միշտ եղել է և էսքան մանուկներ ունեցող էս ժողովուրդը կամ նրա մտավորական ղեկավարները երբեք չհասկացան, թե ինչքան ահեղի աղետ է էդ սովը և ինչ պետք է անեն սրա առաջն առնելու համար⁹: Նամակից պարզ հրեւում է, որ այդ «սովը վերացնելու» առաջին միջոցներից մեկը Թումանյանը համարում է ժողովրդական թեմաների վարպետ մշակումը: Նա տալիս է հեքիաթի ամենաբարձր գնահատականը՝ ասելով. «Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհում—ավելի լավ երկրներում էլ դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հունաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»¹⁰:

Ի տարբերություն որոշ մանկագիրների, որոնք իրենց գրվածքների լեզուն արհեստականորեն հարմարեցնում են մանկան լեզվին, Թումանյանը բնավ չի իջեցնում իր մանկական ստեղծագործությունների լեզվի գրական-գեղարվեստական մակարդակը: Յուրաքանչյուր մանկական երկ գրելիս խստապահանջ բանաստեղծը հաշվի էր առնում փոքրիկի հետաքրքրությունների շրջանակը, նրան տանում երկրներանգ գույների ու հեքիաթների կախարդական աշխարհը, նրա հետ խոսում պոետական այնպիսի հստակ լեզվով, որ նա չհոգնի, չձանձրանա, մանկական գրքերից ստանա գեղարվեստական առավելագույն հաճույք: Ականավոր մանկագիրը միաժամանակ գտնում էր, որ չպետք է շարաշահել երևակայությունը, որ մանկական երկում ամեն ինչ պետք է լինի մատչելի, պատկերային, ունենա հուզիչ հյուսվածք: Անհրաժեշտ է վարպետություն ցուցաբերել նաև երկխոսությունների կիրառելիս: Այս առումով հազվագյուտ օրինակ է «Դեմտակը», որը երկխոսություն է գետակի և մանկան միջև: Այստեղ մի կողմից ընթերցող մանկան համար պարզվում է, թե ինչ հսկայական կարևորություն ունի ջուրը բուսական ու կենդանական աշխարհի, հատկապես մարդու համար, մյուս կողմից փառաբանվում է աշխատանքը.

— Ո՛ւր ես վաղում
Այդպես արագ,
Ա՛յ դո՛ւ կայտառ,
Միտուն գետակ.
Կանգ առ, ի՛նչպե՛ս
էս ծառի տակ:
«Չէ՛, փոքրիկըս»,
Գնամ պիտի.
Տես ջաղացը
Գյուղի մոտի.
Պետք է ուժ տամ,
Որ պլտըտի...»¹¹:

⁹ Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 471.

¹⁰ Նույն տեղում, էջ 472.

¹¹ Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1969, էջ 299.

Նշված բոլոր գեղարվեստական հատկություններն իրենց դասականորեն կատարյալ արտահայտությունն են գտել «Գիշերը», «Մաղիկների երգը», «Ս'անուկն ու ջուրը», «Ջարի վերջը», «Շունն ու կատուն» ստեղծագործություններում, որոնք բեմականացման առատ նյութ են տալիս: Թումանյանը պահանջում էր, որ մանկական երկը լինի կենսախինդ, աշխուժ, հագեցած՝ հումորով, քանի որ վերջինս շատ է դուր գալիս երեխաներին, նրանց պատճառում դվարթություն, առողջ ծիծաղ, զարգացնում նրանց միտքը: Այն երեխայի համար օրգանական պահանջ է, որ բխում է հեղինակի նպատակադրումից՝ մանուկներին զվարթ ու կենսասեր մարդիկ դաստիարակելու ցանկությունից: Երբ բացում ենք «Լուսաբերի» առաջին տարին կամ թերթում ենք «Հասկերի» էջերը, իսկույն աչքի է ընկնում թումանյանական այդ զվարթությունը: Հիշենք «Քաջ Նազարը», «էս էն տունն է», «Բեղեզի դպրոցը», «Ձախորդ Փանոսի հեքիաթը», «Կիկոսի մահը» և այլն: Ահա «էս էն տունն է» ոտանավորը, ուր սկզբից մինչև վերջ դրսևորվում են մանկագրի խորաթափանց հայացքը, ժողովրդական նուրբ հումորն ու արտահայտչական ձևերը.

էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը¹²:

Թումանյանը գտնում էր, որ հեղինակը պետք է ակտիվ վիճակում պահի երեխային, նրա և պատմողի միջև ստեղծի սերտ կապ, որով ջերմություն և անմիջականություն կհաղորդի պատմվածքին կամ հենց ուղղակի հարցով սկսի միտքը. դա մանկան մեջ անմիջապես կառաջացնի ակտիվ հոգեմիջակ, կդրավի նրա ուշադրությունը, կշարժի հետաքրքրությունը (հիշենք «Մղիկը», «Մաղիկները», «Գետակը» և այլն): Բանաստեղծը հաճախ բնության երևույթները ներկայացնում է իրական տպավորությունների հիման վրա: Կարծես մի անբերին զրույց է սկսում մանուկն իր հետ: Նա զարմացած հարցնում է, թե՛

— Ո՞ւր գնացին ծաղիկները:
— Սո՛ւս, քնած են հողի տակ,
Տաք ծածկըված ողջ ձմեռը
Ձյուն-ծածկոցով սպիտակ¹³:

Հայ մանկական գրականությունը հարստացնելու նպատակով Թումանյանը մանկագիրներից պահանջում էր, որ նրանք թարգմանեն համաշխարհային մանկական գրականության լավագույն նմուշները: Իր թարգմանական բեղմնավոր գործունեության ընթացքում նա տվեց կատարյալ թարգմանության բաղմամբիվ օրինակներ, որոնք աչքի են ընկնում թեմայի ընտրության, ժանրային ու ոճական առանձնահատկությունների գործում ցուցաբերած որոշակի վերաբերմունքով. անհնար է այսօր թեկուզ մատնանշել թումանյանական որևէ թարգմանություն, որը պատահական քմահաճույքի հետևանք եղած լինի: Բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը, իր «Հուշեր և զրույցներ» գրքում վկայում է, որ ռուսական բիլինաներից «Մուրոմցի Իլյան կովում է Վլադիմիր իշխանի հետ» և «Սվյատազորը» թարգմանելու առիթը եղել են բանաստեղծի երեխաները: Տեսնելով, որ երեխաները տանը անգիր են անում ռուսերենը, թարգմանել է, որպեսզի դպրոցներում երեխաները դրանք հայերեն սովորեն և ծանոթ լինեն ռուս գրականության հարուստ ժառանգությանը: Այս կարևորագույն ելակետով են պայմանավորված նրա թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար կատարած թարգմանությունները: Իբրև օրինակ կարելի է

¹² Նույն տեղում, էջ 321:

¹³ Նույն տեղում, էջ 312:

նշել Պուշկինի «Օլեգի երգը», «Ջրահեղձը», «Ձմեռվա իրիկունը», «Ռոմանսը», Ժուկովսկու «Աքիլլեսը», Նեկրասովի «Մայրը», Կոլցովի «Գեղջուկի մտածմունքը», Բլոկի «Ծովի երգը», Գորկու «Վալախական լեզենդը», Գյոթեի «Վարդը», Գրիմի եղբայրներից ինը հեքիաթ և այլն:

Մեծանուն բանաստեղծ-մանկագրի գեղագիտական պահանջները մանկական գրականության վերաբերյալ այսօր էլ պահպանում են իրենց հրատապ նշանակությունը և էական կարևորություն ունեն սովետական մանկական գրականության զարգացման համար: Նրանից ազդվել ու նրա ավանդույթները ստեղծագործաբար յուրացրել է սովետական մանկագիրների մի ամբողջ սերունդ:

РОЛЬ ОВАНЕСА ТУМАНЯНА В РАЗВИТИИ АРМЯНСКОЙ ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ

ГОАР СИМОНЯН

Резюме

Великий армянский поэт Ованес Туманян был также крупнейшим детским писателем и теоретиком армянской детской литературы. Основным источником его произведений для детей были народные сказания и средневековая армянская литература. На его творчество оказал влияние также Хачатур Абовян. Он обогатил и развил традиции детской литературы, теоретически обобщил принципы этой литературы, осветил ее дальнейший путь.

Ованес Туманян сознавал трудности, связанные с созданием настоящей детской литературы. Он считал, что детский писатель должен в первую очередь учитывать возрастные и психологические особенности детей, правдиво раскрывать их духовный мир и многообразие интересов. Требования, которые писатель предъявлял к детской литературе, нашли классическое отражение в таких его произведениях, как «Гикор», «Песня цветов», «Малыш и вода», «Конец зла», «Храбрый Назар», «Кот и пес» и др. Туманян обогатил армянскую детскую литературу также переводами лучших произведений русской и всемирной детской литературы. Творчество Туманяна оказало сильное влияние на целое поколение советских армянских детских писателей, которые стали продолжателями его великих творческих традиций.